



## Դիմում- դիրքորոշում

### «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 27-ի N 910-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

2018 թվականի դեկտեմբերի 29-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքում հրապարակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 27-ի N 910-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ):

Եվրոպական միության կողմից ֆինանսավորված «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը «Զարգացման սկզբունքներ» հասարակական կազմակերպության հետ համատեղ ուսումնասիրել է նախագիծը և ներկայացնում է հետևյալ դիրքորոշումը:

Ներկայացված նախագծի հիմնավորման համաձայն՝ նախագծի նպատակը ավելացված արժեքի հարկով հարկելու տեսանկյունից սուբսիդիաները, սուբվենցիաները և դրամաշնորհային ծրագրերը որպես արտոնյալ որակավորելու կամ արտոնյալ որակավորումը մերժելու, ինչպես նաև արտոնյալ որակավորված ծրագրերի փոփոխման կամ փոփոխումը մերժելու վերաբերյալ եզրակացություններն ընդունելու նպատակով ծրագրերի գնահատման **չափորոշիչների և մեթոդաբանության սահմանում է:** Մինչդեռ ներկայացված նախագծի կարգավորումներն իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի տեսանկյունից շարադրված են ոչ բավարար հստակությամբ՝ հետևյալ հիմնավորմամբ.

- 1) Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետով ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 27-ի N 910-Ն որոշման N 2 հավելվածի նոր խմբագրությամբ շարադրվող 10-րդ կետի 3-րդ պարբերության (չնայած, որ այն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից պետք է համարակալված լիներ որպես ենթակետ) «բ» պարբերության համաձայն՝ ծրագրերի փոփոխության առաջարկը մերժվում է, եթե փոփոխությունը հանգեցնում է տնտեսական աճի ապահովման և նույն ոլորտում գործող այլ տնտեսվարող սուբյեկտների համեմատությամբ հարկման խտրական մոտեցումների առկայության չափանիշների պայմանների **էական փոփոխության:** Այդ առնչությամբ գտնում ենք, որ «էական փոփոխություն» ձևակերպումը գնահատողական բնույթ է կրում և պարզ չէ, թե ինչպե՞ս է հանձնաժողովը գնահատելու, թե այդ երկու չափանիշների առումով փոփոխությունն էական է, թե՞ ոչ էական: Եթե նշված երկու չափանիշները ծրագիրը որպես արտոնյալ որակելու ժամանակ գնահատվում են կոնկրետ միավորներով, ապա ինչու նախագծով չի սահմանվել, որ, օրինակ, արդեն իսկ գնահատված այդ երկու չափանիշների միավորների **1/3-ով նվազումը հանձնաժողովի կողմից կգնահատվի որպես էական**



**փոփոխություն:** Հետևաբար գտնում ենք, որ հիշյալ կարգավորումն իր մեջ ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1205-Ն որոշման հավելվածով հաստատված «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգ»-ի 9-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կոռուպցիոն գործոն է պարունակում, ինչը դրսևորվում է որոշակի հանգամանքների առկայության դեպքում պաշտոնատար անձանց **սեփական հայեցողությամբ գործելու անհարկի լայն հնարավորություն ընձեռելու միջոցով**, այդ թվում՝ որոշումների ընդունման ժամկետների և պայմանների, ինչպես նաև այլընտրանքային լիազորությունների դիտարկման միջոցով:

- 2) Նախագծի 1-ին կետի 4-րդ ենթակետով ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 27-ի N 910-Ն որոշման N 3 հավելվածի 12-րդ կետից հետո լրացվող 12.1 կետով նախատեսվել է ծրագրերը՝ որպես արտոնյալ որակելու համար չափորոշիչներ՝ տնտեսական աճի ապահովում, նոր աշխատատեղերի ստեղծում, նույն ոլորտում գործող այլ տնտեսավարող սուբյեկտների համեմատությամբ հարկման խտրական մոտեցումների առկայություն, սակայն հենց այդպիսիք ընտրելու հիմնավորումները չեն ներկայացվել, ինչն էլ հնարավորություն չի տալիս գնահատելու դրանց կարևորությունը: Օրինակ, առաջին երկու չափորոշիչներն առավելապես կիրառելի կարող են լինել ներդրումային (բիզնես) ծրագրերի արտոնությունների տրամադրման եզրակացությունների գնահատման համար, հետևաբար, անհասկանալի է սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհների արտոնյալ գնահատման համար նույն չափանիշների օգտագործման նպատակը, քանի որ դրանց ինստիտուցիոնալ նպատակները տարբեր են:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 27-ի N 910-Ն որոշման N 3 հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ սույն կարգի պահանջները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի շրջանակներում տեղաբաշխվող **սուբսիդիաների, սուբվենցիաների ու դրամաշնորհային ծրագրերի վրա**, ինչպես նաև հաշվի առնել այն, որ հիշյալ որոշման իմաստով սուբսիդիա, սուբվենցիա և դրամաշնորհ բառերի սահմանումներ չեն տրվել: Հետևաբար, անալոգիա կիրառելով ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի 1937-Ն որոշման հետ, կարելի է ասել, որ **սուբսիդիան** ուղղված չէ կազմակերպության համար կապիտալ ակտիվների ձեռքբերմանն ու հիմնական ֆոնդերի կամ դրամագլխի ավելացմանը և կազմակերպության ընթացիկ գործունեության արդյունքում գոյացող եկամուտների հավելում է, իսկ **դրամաշնորհը** տնտեսության որևէ ճյուղի կամ գործունեության որևէ տեսակի խթանման նպատակով բյուջեից կազմակերպությանն իր կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական հատկացումն է: Այսինքն, հիշյալ առումներով, նախագծով առաջարկվող չափորոշիչների առնվազն առաջին երկու չափորոշիչների նպատակն անհասկանալի է:

Կամ էլ, օրինակ, դրանց թվում ներկայացված է նոր աշխատատեղերի ստեղծման չափորոշիչը, սակայն այսօր ոչ պակաս կարևոր է արդեն իսկ ստեղծված աշխատատեղերի պահպանման խնդիրը հատկապես հասարակական կազմակերպությունների դեպքում, որոնք չունենալով ֆինանսավորման կայուն աղբյուրներ, շատ դեպքերում իրենց աշխատողներին վարձատրության հարցը լուծում են դրամաշնորհային ծրագրերի միջոցների



հաշվին: (Սույն առաջարկը ներկայացվում է «Զարգացման սկզբունքներ» ՀԿ-ի հետ համատեղ:)

- 3) Նախագծի 1-ին կետի 4-րդ ենթակետով ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 27-ի N 910-Ն որոշման N 3 հավելվածի 12-րդ կետից հետո լրացվող 12.2 կետով նախատեսվել է հանձնաժողովի անդամների կողմից ծրագրերը գնահատելու մեթոդաբանություն, որի համաձայն՝ տնտեսական աճի ապահովման գնահատումն իրականացվում է 2 չափանիշների հիման վրա՝ **եթե ստեղծվող արդյունքը շարունական է և եթե ստեղծվող արդյունքն ազդեցություն ունի այլ ոլորտների զարգացման վրա**: Այդ առնչությամբ գտնում ենք, որ հիմնավորված չէ նախագծով այնպիսի կարգավորումների սահմանումը, որոնց համաձայն հիշյալ չափանիշները բացակայությունը կարող է գնահատվել 0-3 միավոր: Եթե չափանիշները բացասական են, ապա գնահատման միավորը պետք է հստակ նախատեսվի 0: Նույն մոտեցումը պետք է որդեգրվի նաև ոլորտում գործող այլ տնտեսվարող սուբյեկտների համեմատությամբ հարկման խտրական մոտեցումների առկայության գնահատման ժամանակ:
- 4) Նախագծի կետերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներին:

Հաշվի առնելով նախագծում առկա վերոնշյալ մտահոգությունները և առաջարկությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ նախագծի քննարկման համար չի հատկացվել բավանակաչափ ժամանակ (հանրային քննարկման համար հատկացված 17 օրից 12-ը եղել են ոչ աշխատանքային և տոն օրեր) և այն դեռևս չի քննարկվել հասարակական կազմակերպությունների շրջանում, առաջարկում ենք երկարացնել հանրային քննարկման ժամկետը և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավմամբ ստեղծել աշխատանքային խումբ՝ նախագծի հետագա լրամշակման աշխատանքների կազմակերպման և առկա բացթողումների շտկման նպատակով: